

նախկին կարաւանին, և ահա դուրս կու գայ առջեւնիս եղած անիմաստ ընթերցումը : Արդ, կը փորձենք այսպէս ձեւակերպել . « Եւ Չոմե՛ իշխանն ազգին Սահառունեաց տոմի » ... « ազգիս » . գոզցես աւելորդ թուի, կամ պակասի մի այլ իշխանական տոհմի կամ ազգի անուն :

17. Իջ 29. տող 38. « Չոսա գամենեսեան հրամայեաց ... հատուցակը զմանուկն Յուսիկ յառաքելական աթոռն հայրապետացն » : — Ուղղ. հատուցակը : Թագաւորն հրամայում է նստուցանել արքունական կառքի մէջ և տանել ի կեսարիա, որպէս զի հատեցեհն հայրապետական աթոռը : Ուստի « իաղասցեն գնացեն » ի պէտք չէ մի դիմաւոր բայ՝ « հասուցանել » , ուր նորա հանդէպը կայ « գնացին եկին հասին ի քաղաքն կեսարացոց , և ձեռնադրելով զՅուսիկ՝ հատուցին զնա յաթոռն Առաքելոց » : ... Երչնպէս և յետ դարձին երբ թագաւորին հետ ընդ առաջ են գնում՝ բերում են յԱրտաշատ յեկեղեցին, « և նստուցանէին զցանկալի մանուկն յաթոռ հայրապետական » :

18. Իջ 30. տող 30. « Սուրբ և պայծառ հոգւով ... իբրեւ զարդեան նահատակ ի սղայութենէ տիտոց կելուներ ... » : — Ուղղ. ծածկալիք : « Նշկահել » բառն միայ իշխանութեան տակ լինելու իմաստն ունի, որ մեր սրբոյն չէ յարմարում :

19. Իջ 31. տող 8. « Վասն որոյ հանապազ ընդդիմացեալ ... յերեսան յանդիմանութեամբ հարկանելով խրատելով կըշտամբելով արկաներ, զպատնումն տանջանաց յաւիտեանական բարկութեան », և այլն : — Ուղղելի՛ ա. հարկանելով ջնջել, բ. հարկաներ, գ. զպատնումն : Դիտելի է որ այս հատուածին մէջ մի զուգարկութեամբ իբարու նման վերջանում են պարբերութիւնք . զոր օրինակ « կշտամբելով հարկանէր . . . պատմելով բողոքէր . . . յինքեան ցուցանէր . . . քաջութեան կատարէր . . . ի մահ մարտնչէր . . . առնել կամէր . . . ոչինչ համարէր . . . լի էր . . .

չտալ (ուղղ. չտայր) թըյլ . . . և այլն : Աստի հետեցեհելով՝ մենք ձեւակերպելով յառաջ բերած պարբերութիւնը ասում ենք « . . . հանապազ յերեսան յանդիմանութեամբ խրատելով կշտամբելով հարկաներ, զպատնումն . . . բողոքէր » : Ուստի ըստ իմաստին՝ երես զարեկուն, հարկանել պիտի և ոչ արկանել, որ չէ բնական իտասկցութիւն :

20. Իջ 31. տող 28. « Հարցն նմանել ի մանկութեան . . . . զհանճարոյն զուարթութեան ուշաքեան » : — Արդեօք անուշաքեան ? Առաջին « Հարցն նմանել » էն յառաջ՝ թուի ջնջելու է վերջակետք . երկրորդ՝ զուարթութեան վերջի վանկն՝ ընդօրինակողի աչքին թուացել է նոյն ընդ անուշութեան « ան » ի հետ : Մանաւանդ որ յետոյ բաղդատութիւն մը կը հետեւի ծաղիկ հետ, որ անուշութիւն մը ունի թէ տեսքի և թէ հոտոյ, որ է առակ օրինակի սրբութեան վարուց բարուց Յուսկան, որոյ նկարագիրն այնքան քնքշօքէն, էջ 30, տող 27, ընդգծել է Բուզանդ :

21. Իջ 32. տող 31. « Եւ զխաւարայն խորխորատ կորստեան զբեալ, հարեայ իւրեանց » : — Արդեօք հստեալ ? !

22. Իջ 34. տող 13. « Գնալի ոչ էին թէ որպէս այլոց ազգականաց և հաւատացելոցն » : — Ուղղ. ազգացն . իմաստը պարզ է, համեմատութիւն հայ ազգին ընդ հաւատացելոց և ազգաց :

Շարաշարիկ  
Հ. ԳՐԱՐԻՒՆ ԵՎ ԱՎԱԳՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ

Հ. Կ. Տ. ՍԱՀԱԿԵԱՆ

Հ Ա Յ Կ Ա Յ Ս Ե Ր Բ Բ Ի Ի Զ Ա Ն Գ Ի Ո Ն Ի

Ա. Հ Ա Տ Ո Ր

ՄՐԻԿ, ՎԱՐՊԱՆ, ԼԵՈՒՆ ԼԱՅՈՒՅԵ, ՎԱՍՈՒ ԱՐԵՎՈՒՆԻ, ԼԵՈՒՆ ԻՐԱՍՏԱՆԵՐ, ԱԼԵՔԱՆԴՐ

Պիճն Քր. 2, 50